# Լեռնային Ղարաբաղում այրվում են հացահատիկի դաշտերը

Վերջին շրջանում ԼՂԻՄ-ում զանգվածային բնույթ են կրում հայերի կողմից մշակված հացահատիկային դաշտերի հրդեհումները, որոնց հավաքը ձգձգվում է վառելիքի պակասի պատճառով: Այդ մասին «Ինտերֆաքսին» հայտնեցին ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդում: Մարզխորհրդի տվյալներով հրդեհվել է մոտավորապես 500 հեկտար հացահատիկի արտ Հադրութի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների բազմաթիվ գյուղերի դաշտերում: Ոչնչացվել է ավելի քան 1000 տոննա ցորեն: Տնտեսություններին հասցված վնասը կազմել է շուրջ 1 մլն. ռուբլի:

Մարզխորհրդում հայտնեցին նաև, որ Ադրբեջանի իրավապահ մարմինների որոշման համաձայն, նախկին Շահումյանի շրջանի պարետատունը շրջկենտրոնից փոխադրվել է Նավթալան քաղաք, որը Շահումյանից գտնվում է մոտ 80 կմ հեռավորության վրա: Մարզխորհրդում համարում են, որ դա կապված է շրջանի գյուղերից հայ բնակչությանը տեղահանելու լայնամասշտաբ գործողության նախապատրաստման հետ: ■